ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

«ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-25/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով վերականգնողական աշխատանքների (ՀՀ Արագածոտնի մարզի Բյուրական գյուղի Սբ. Հովհաննես եկեղեցու շքամուտքի, հյուսիսային կից ամրոցի պատի և պարսպապատի վերականգնման աշխատանքներ) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 07.01.2025թ. ժամը 15:00-ին Էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի կազմը՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Հովսեփյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Լուսինե Իգիթյան /գնահատող/

Սուրեն Շաքարյան /գնահատող/

Արմինե Ստեփանյան /բացող/

Վերգինե Սահակյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-25/6 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-25/6 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	«ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ԱՍՖԱԼՏ» ՍՊԸ և «Լուսի-Արեգ» ՍՊԸ կոնսորցիում	spandaryanasfalt@gmail.com
2	«ԼԵՎԳՈՒԿ» ՓԲԸ	lev.ghukasyan@gmail.com

3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

4.1 Մասնակիցը ներկայացրել է հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները			
		«ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ԱՍՖԱԼՏ» ՍՊԸ և «Լուսի-Արեգ» ՍՊԸ կոնսորցիում		«ԼԵՎԳՈՒԿ» ՓԲԸ	
		Առաջարկված գինը, ՀՀ դրամ			
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	31148932	24140000	28968000	30889500	30889500

5. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

5.1 Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով կասեցնել նիստը և շարունակել այն հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, բայց ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հրավերի 8.2 կետով սահմանված ժամկետում, ՀՀ կրթության,գիտության,մշակույթի և սպորտի նախարարություն Վազգեն Սարգսյան 3,Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 310 սենյակ հասցեում:

Ընդունվել է* որոշում՝ *կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 20.01.2025թ. ժամը 15:00-ին

6. Տվյալներ մասնակցի հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6.1 «ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ԱՍՖԱԼՏ» ՍՊԸ և «Լուսի-Արեգ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝ ներկայացված կոնսորցիումի պայմանագրի 1.1. կետում նշված աշխատանքները չեն համապատասխանում հրավերով նախատեսված աշխատաներին:

Ընդունվել է* որոշում՝ *կողմ 5, դեմ 0:

6.2 «ԼԵՎԳՈՒԿ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

7. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

7.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ Կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել **«ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ԱՍՖԱԼՏ» ՍՊԸ և «Լուսի-Արեգ» ՍՊԸ կոնսորցիումին** մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 6.1 կետով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7.2 Հանձնաժողովի նիստը շարունակել արձանագրված անհամապատասխանությունները մասնակցի կողմից սահմանված ժամկետում շտկելուց հետո՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 310 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 22.01.2025թ. ժամը 11:00-ին

8. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

8.1 **«ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ԱՍՖԱԼՏ» ՍՊԸ և «Լուսի-Արեգ» ՍՊԸ կոնսորցիումը** սահմանված ժամկետում շտկել է հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները և շտկված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:

9. Տվյալներ ընտրված, *այդպիսին* չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.

9.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ բավարար գնահատված հատեր ներկայացրած մասնակիցներից.

1-ին տեղ զբաղեցրած՝ ընտրված մասնակից ճանաչել **«ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ԱՍՖԱԼՏ» ՍՊԸ և «Լուսի-Արեգ» ՍՊԸ կոնսորցիումին,**

2-րդ տեղ զաղեցրած մասնակից ճանաչել **«ԼԵՎԳՈՒԿ» ՓԲԸ-ին:**

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

10. Գնահատման արդյունքների մասին.

10.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակիցներին էլեկտրոնային ձևով ՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Հրանտ Հովսեփյան /նախագահ/

_____ Լուսինե Իգիթյան

_____ Սուրեն Շաքարյան

_____ Արմինե Ստեփանյան

_____ Վերգինե Սահակյան

_____ Արսեն Սողոմոնյան /քարտուղար/